# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք.Ալավերդի, (0253) 2-41-00, alaverdimunicipality@gmail.com

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

08 ապրիլի 2025 թվականի N 543-Ա

## ԱՁ ԿԱՌԼԵՆ ԻՍՐԱՅԵԼՅԱՆԻ ՈՒԽԾ-Ի ԳՈՒՄԱՐԻ ԳԱՆՁՄԱՆ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 45-րդ հոդվածի համաձայն յուրաքանչյուր ոք պարտավոր է օրենքով սահմանված կարգով և չափով մուծել հարկեր, տուրքեր, կատարել այլ պարտադիր վճարումներ: «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի, 1-ին մասի համաձայն, պարտավոր եք սահմանված ժամկետում և կարգով լրիվ վճարել օրենքով սահմանված տեղական տուրքերը և (կամ) վճարները: «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 9-րդ կետի և Ալավերդի համայնքի ավագանու 26 դեկտեմբերի 2023 թվականի թիվ 132-Ն որոշման համաձայն պարտավոր եք վճարել համայնքի վարչական տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների Սայաթ-Նովա փողոցի 12/3-1 խանութի հասցեի ԱՁ Կառլեն Իսրայելյանը հանդիսանալով ոգելից և ալկոհոլային խմիչքների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառքի թույլտվության համար վճարող, չի վճարել իր թույլտվության վճարը, որի արդյունքում 2024 թվականի երկրորդից մինչև չորրորդ եռամսյակների համար գոյացել է 60.000 /վաթսուն հազար/ ՀՀ դրամ պարտք:

Ելնելով վերոգրյալից ***որոշում եմ՝***

1. ԱՁ Կառլեն Իսրայելյան (հասցեն՝ Ալավերդի քաղաքի Սայաթ-Նովա փողոցի 12/3-1 խանութ) գանձել 60.000 /վաթսուն հազար/ ՀՀ դրամ:
2. Սույն որոշման 1-ին կետում նշված գումարը ենթակա է վճարման Ալավերդու համայնքապետարանի բյուջեի 900265121310 հաշվեհամարին:
3. Սույն որոշումը կարող է բողոքարկվել ստացման պահից հետո՝ 2 ամսվա ընթացքում:
4. Սույն որոշման 2-րդ կամ 3-րդ կետի պահանջները չկատարելու դեպքում այն կդառնա անբողոքարկելի վարչական ակտ և գումարը կբռնագանձվի դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության միջոցով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ. ՂՈՒՄԱՇՅԱՆ